ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆՅԱՆԻ ԲՆԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լ. Ս. Սարվազյան,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

«Անհնար է աշխարհը ճիշտ կառավարել
առանց Աստծո և Աստվածաշնչի»:
Ջորջ Վաշինգտոն

Հոգևոր վերազարթոնքի, հասարակական ու ազգային-քաղաքական բարեփոխումների ներկա ժամանակաշրջանում բնական է հակումը Աստվածաշնչյան, մասնավորապես՝ քրիստոնեական արժեքներին, որոնցով պայմանավորված են մարդու կեցությունը, գոյակերպը և քաղաքակրթության ապագան: Կարևորվում են այն տեսությունները, որոնցում մեկնաբանվում, իմաստավորվում են բարոյականության և իրավունքի ակունքները: Այս առումով եզակի աշխատություն է Մաղաքիա Օրմանյանի «Համապատումը», որտեղ բացահայտվում են համամարդկային գաղափարների իմաստն ու չափասահմանը:

Ըստ հեղինակի՝ իրավականի, օրինականի, արդարության, ազատության, իրավունքի և օրենքի, պատշաճի ու պարտականության վերաբերյալ մարդու ըմբռնումների հիմքը Աստվածաշնչյան ճշմարտություններն են, հատկապես՝ քրիստոնեական ուսմունքն իր բարոյական սկզբունքներով ու հոգևոր ներուժով: Հետևաբար՝ մարդկության ամենամեծ հեղափոխությունն առնչվում է Քրիստոսի անվանը. «Քրիստոնէութեան կը պարտի աշխարհք, ինչ որ իբր մարդկային ինքնագիտակցութեան, ազատագրութեան, արժանապատուութեան, եղբայրակցութեան և զարգացուն յառաջադիմութեան անուններու ներքեւ ստացած է»[1]: Այս ուսմունքի արդյունքներով ապացուցվում են դրա կենսունակությունն ու հասարակական օգտակարությունը, քանզի Քրիստոսի քարոզները «լոկ տեսական կերպով աւանդուած սկզբունքներ չէին, այլ գործնական կեանքի

[1] Օրմանեան Մ. , Համապատում. Չորս Աւետարաններուն պարունակութիւնը շարայարեալ եւ համաձայնելով եւ բացատրելով պատմուած, Նախաբան, Կ.Պոլիս, Հրատ. Վ. եւ Հ. Տէր- Ներսէսեան, 1911, էջ Գ:

կանոններ կը պարունակէին, փոփոխ յարաբերութիւններ հաստատելու բնութիւնն ունէին, յատուկ պաշտամունքի ձեւեր կը սորվեցնէին, ներքին իշխանութեան հիմեր կ'աւանդէին, մէկ խօսքով ամփոփ և կազմակերպեալ և կանոնաւորեալ մարմիններ ձեւացնելու ամէն տարրները կը ներկայէին»[1]:

Օրմանյանի դիտարկմամբ՝ քրիստոնեությունը նպաստել է ազգերի բարոյականացմանն ու բարեկրթմանը. «Ազգերու ընդհանուր բարոյականին տեսակէտէն ալ չտեսնուիր միթէ՞, որ լաւագոյն բարոյականի տէր ճանչցուած են այն ազգերը, որոնց մէջ աւելի ընտելացած է Աւետարանի ընթերցումը»[2]: Նա կարևորում է ազգային իրավունքների աստվածային հիմքերի մեկնաբանումը՝ դրանց անօտարելիությունը հիմնավորելու նպատակով:

Օրմանյանը շեշտում է **Հին և Նոր Կտակարանների միասնականությունը,** որն արտահայտվում է աստվածայինի ու մարդկայինի հարաբերակցությունը հաստատող սկզբունքներով: Միաժամանակ, համեմատական մեթոդով վերլուծելով Աստվածաշնչում առկա բարոյաիրավական հիմնադրույթները, նշում է **քրիստոնեական սկզբունքների առավելությունը** Հին Կտակարանում մատուցվող օրինականության ընկալումների նկատմամբ: Նա նորովի մեկնաբանում է օրենքի և սովորույթի, իրավունքի ու բարոյականության հարաբերակցությունը, օրենքների բնությունը, դրանց գործադրման ու փոփոխման կարգը, օրենքի բացառությունները և այլ հիմնահարցեր:

Անդրադառնալով Հին ու Նոր օրենքների հարաբերակցությանը, Հին օրենքի ժառանգորդման ու լուծարման կարգին՝ հայ մտածողը բացատրում է, որ Հիսուսը Մովսիսական օրենքների դադարումը հռչակելով՝ երբեք չի արգելել դրանց կիրառումը և Ինքն էլ գործադրել է դրանք: Նա դեմ է միայն Օրենքից չբխող հնացած սովորույթների պահպանմանը, քանզի նոր գաղափարները հնարավոր չէ հարմարեցնել դրանց: Պետք է «Նոր Ուխտը նոր օրէնքներով կազմել, որպէս զի հաստատուն հիմով պատրաստուի և պահպանուի»[3]: Բայց երբեք չի կարելի միանգամից հեղաշրջել Օրենքը, այլ պետք է նախ փոխել մարդկանց իրավագիտակցությունը՝ Նոր օրենքը գործադրելու և նոր իրավահարաբերություններ հաստատելու համար: Օրմանյանի մեկնությամբ.

- Հին Ուխտը պահպանվեց՝ ազատվելով ավելորդ սովորույթներից,

---

[1] Օրմանեան Մ., Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից Ազգային պարագաներով պատմուած, Մասն Ա, Կ.Պոլիս, Հրատ. Վ. եւ Հ. Տէր- Ներսէսեան, 1912, էջ 17:
[2] Օրմանեան Մ., Համապատում, Նախաբան, էջ Ե:
[3] Նույն տեղում, էջ 120:

• ընդունվեց որոշում՝ հին պատվիրանները հեթանոսությունից քրիստոնեության դարձողների վրա չտարածելու վերաբերյալ,
• բուն հրեաների համար էլ հին պատվիրանների պարտավորիչ լինելը դադարեցվեց,
• Նոր օրենքն աստիճանաբար հաստատվեց ու տարածվեց:

Հարկ է նշել, որ Հին օրենքը ևս աստվածային է՝ տրված Մովսեսին ու հաստատված մարգարեների կողմից: Հետևաբար՝ Հիսուսը չէր կարող այն սխալ ու դատապարտելի հռչակել, բայցև չէր կարող այն անվերապահ հաստատել՝ առանց հակասելու ինքն իրեն: Ուստի՝ անհրաժեշտ է բացատրել **«օրենքը լուծարելու»** և **«օրենքը լրացնելու»** տարբերությունը: Երկու դեպքում էլ օրենքը փոփոխվում է, սակայն առաջին դեպքում հիմնովին՝ փոխարինվելով նոր օրենքով, իսկ երկրորդ դեպքում՝ լրացվելով, բարեփոխվելով ու իմաստային առումով ամբողջանալով: Այս իրողությունը լավագույնս բացահայտվում է Հիսուսի խոսքում. «Մի կարծէք, թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները քանդելու. ես չ'եկայ քանդելու, այլ կատարելու... օրէնքիցը մի կէտ կամ մէկ պզտիկ նշանագիր չի անցնիլ մինչեւ որ բոլորը չ'կատարուի» (Մատթ., Գլ. Ե, 17-19)[1]:

Օրենքը չլուծարելը վերաբերում է **«Տասնաբանեայ»** բարոյական Մայր օրենքին և ո՛չ բուն հրեական ծիսակարգին ու հասարակությունը կարգավորող մասնավոր կանոններին: Օրմանյանի մեկնաբանությամբ՝ Քրիստոսը «հոս չուզեց լուծել Մովսէսի օրէնքը իբրեւ սխալ բան մը, այլ կատարելագործել միայն զայն ճշմարտութեան լրումովը, ինչպէս կը լրացուին օրինակները իրենց նախատիպին միջոցաւ»[2]: Հետևաբար՝ ***Նոր օրենքը հաստատվեց Հին օրենքի լրացման ու կատարելագործման սկզբունքով:***

Հռչակելով **«Օրենքները մարդու համար են»** քրիստոնեական կարգախոսը՝ Օրմանյանը խնդիր է դնում բացահայտել օրենքների էությունը, ոգին, օգտակարությունը և գործադրության սկզբունքները: Մասնավորապես՝ «Շաբաթի օրենքը» մեկնաբանելիս հաստատում է, որ «հանգիստի օրէնքը դրուեցաւ իբրեւ մարդուն պէտքը լրացնելու միջոց, եւ ոչ թէ մարդը զրկելու եւ անոր վնասելու համար. շաբաթը պիտի ծառայէ մարդուն օգուտին. եւ ոչ թէ մարդը պիտի ծառայէ շաբաթին օգուտին»: Քրիստոնեական իմաստով այս սկզբունքն **ընդհանուր** է և «կը պատշաճի ամէն դրական օրէնքներու,

---

[1] Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների (Եբրայական եւ Յունական բնագիրներից թարգմանուած), Թեհրան, Տպագր. Ս.Գրոց ընկերութ., 1989 (վերատպ. 1896թ. խմբ.):
[2] Օրմանեան Մ., Տեղիք Աստուածաբանութեան. Տեսական Աստուածաբանութիւն, Երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, 1985, էջ 9:

որք այս տեսակ արգելքներ կամ զրկումներ կը պատուիրեն»[1]: Նշվածից կարելի է եզրակացնել, որ դրական օրենքի փոփոխության հիմնապատճառը **հասարակական օգտակարությունն է՝ մարդկանց բարօրությունը,** ինչով էլ արդարացվում են օրենքի որոշ բացառություններ: Օրենքը բարիք գործելու արգելք լինել չի կարող: Ի վերջո՝ բացառությունները բխում են բնական իրավունքից ու օրենքներից:

Օրմանյանի բնաիրավական տեսության մեջ առանցքային է Քրիստոսի **«Լեռան քարոզչության»** մեկնությունը, որն Աստվածաշնչյան բարոյական սկզբունքների հրաշալի հյուսվածք է՝ ուսանելի բոլոր ժամանակների համար: Քարոզի ողջ տրամաբանությունը հանգում է հետևյալ սկզբունքներին.

Ա. Ներքին՝ հոգևոր առաքինությունների գերակայություն արտաքին՝ աշխարհիկ իրողությունների նկատմամբ:

Բ. Գաղափարների օգտակարությունը գործնականում ապացուցելու անհրաժեշտություն:

Գ. Օրենքների բարեփոխում և կատարելագործում, ինչը քրիստոնեական իմաստով՝ «օրէնքը իր տառական առումէն բուն իմաստին և հոգիին բարձրացնելն է, նիւթական իմացուածէն հոգեկան գործադրութեան տանելն է, արտաքին ձեւէն ներքին իսկութեան փոխելն է»[2]:

Օրենքի արտաքին (ձևական) ու ներքին (էական) կողմերի հարաբերությունն Օրմանյանը բացատրում է որպես **իրավունքի ու բարոյականության հարաբերակցություն.** ի բնե մարդկանց սրտերում ներդրված բարոյական սկզբունքներն են, որ «իբր ոգի կ'ոգևորեն օրինաց գիրը. որ ինքնիրեն մնացեալ ոչ այլ ինչ է եթէ ոչ մարմին անկենդան, անգործ և անազդեցիկ»[3]: Նրա համոզմամբ՝ Հին օրենքի բառացի սահմանումները լրացվում են հոգևոր-բարոյական իմաստով, ինչը Նոր ժամանակի իմաստասերներն անվանեցին **օրենքի ոգի:**

Հատկանշական են «Տասնաբանեայ» պատվիրանների քրիստոնեական վերախմբագրումն ու վերաիմաստավորումը: Օրմանյանը մեկնաբանում է Հին պատվիրանների՝ Նոր օրենքում ստացած նշանակությունը (տես՝ Մատթ., Գլ. Ե, 17-48): Օրինակ՝ **«Սպանութիւն մի անիր»** (Ելից, Գլ. Ի, 13) պատվիրանի իմաստը Հին օրենքում պարզապես ինչ-որ մեկի կյանքը չվտանգելն է, մինչդեռ Հիսուսն այդ պատվիրանի բովանդակությունը և ազդեցությունն

---

[1] Օրմանեան Մ., Համապատում, էջ 135:
[2] Նույն տեղում, էջ 162:
[3] Օրմանյան Մ., Հայ երիտասարդութիւն (Բանախօսութիւն), Կ.Պոլիս, Տպագր. Ա.Ա. Գանթար, 1880, էջ 61:

ընդարձակում է՝ մերձավորի դեմ որևէ անօրինություն չգործելու իմաստով. «Ամեն ով որ զուր տեղը բարկանայ իր եղբօրը, պարտական կ'լինի դատաստանին. եւ ով որ իր եղբօրն ասէ յիմար, պարտական կ'լինի ատեանին...» (Մատթ., Գլ. Ե, 22): Ակնհայտ է, որ ***արտաքին՝ կանոնական ձևաչափը լրացվում է ներքին բարոյափիլիսոփայական մեկնությամբ:*** Արդարության սկզբունքը, օրենքի ոգին ընկերոջը չվնասելն է, քանզի ինչ կերպով ու չափով էլ լինի վնասը, այն զանցառություն կամ հանցանք կհամարվի՝ համաձայն Նոր օրենքի, որում նույնանում են իրավական ու բարոյական հարթությունները: Օրմանյանը նաև հաստատում է հանցավոր արարքների դատապարտումը և՛ երկրային, և՛ երկնային ատյաններում. «Օրինազանցները ոչ միայն մարդկային դատաստանով կը դատապարտուին, այլ եւ աստուածային դատաստանով հանդերձեալ աշխարհի կրակին ալ արժանի կ'ըլլան»[1]:

«Շնութիւն մի անիր» (Ելից, Գլ. Ի, 14) պատվիրանը բառացի իմաստով արգելում է անօրինական հարաբերությունները, իսկ Քրիստոսը օրենքի արգելող իմաստը տարածում է ցանկական բոլոր գայթակղությունների վրա: Այսինքն՝ պատվիրանի ոգին մարդուն հորդորելն է, որ խուսափի դրանցից:

«Աչքի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ատամ... հարուածի տեղ հարուած» (Ելից, Գլ. ԻԱ, 24-25). մովսիսական այս պատվիրանը մեկնաբանելիս Օրմանյանը պարզաբանում է, որ օրենքը տրված էր դատաստանի իրավունքով, այսինքն՝ կատարված հանցանքի համար հատուցելու իմաստով: Սակայն փարիսեցիներն այն պատշաճեցրել են անհատական իրավունքներին՝ յուրաքանչյուր առիթի դեպքում թույլատրելով վրիժառությունը՝ վնասի չափին համապատասխան: Քրիստոնեական խմբագրությամբ՝ օրենքը ճշգրտվում է և միջանձնային հարաբերություններում անհրաժեշտ ուղղությամբ լրացվելով՝ հրամայում. **չհակառակվե՛լ չարին:** Այս սահմանմամբ օրենքի իմաստը չարագործությանը նպաստելը կամ այն քաջալերելը չէ, այլ անհատական վրիժառությունը կանխելը: Քրիստոսը դրական օրենքը լրացնում է ներողամտության ու հեզաբարոյության սկզբունքներով՝ պատվիրելով. **«Քո մէկ երեսին զարկողին միւսն էլ դէմ արա. եւ նա՝ որ քո վերարկուն քեզանից հանում է, շապիկդ էլ մի արգելիր նորանից»** (Ղուկ., Գլ. Զ, 29):

Հարկ է նշել, որ այս պատվիրանը բազմիմաստ է, ինչը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տվել՝ ընդհուպ իբրև ստրկամտության արտահայտություն: Խնդիրը պարզաբանվում է Օրմանյանի բացատրությամբ, ըստ որի՝ ծայրահեղ ներողամտությունը կարող

---

[1] Օրմանեան Մ., Համապատում, էջ 164:

է իրականանալ միայն Բարձրագույն՝ աստվածային և ո՛չ սովորական՝ մարդկային առաքինությամբ: Ուստի՝ թվացյալ չափազանցությունները պետք չէ բառացի հասկանալ, մանավանդ որ՝ «Յիսուս դատական եւ հանրական իրաւանց տեսակէտէն չխօսիր, այլ միայն ու միայն անհատական և անձնական յարաբերութեանց տեսակէտէն»[1]: Նշված իմաստով հայ մտածողի դիտարկումն իրավացի է, քանի որ փոխադարձ վրեժխնդրության ոգին զգալի վնասում է ընտանեկան ու քաղաքացիական հարաբերություններին՝ հարուցելով գժտություն ընտանիքում և երկպառակություններ հասարակության մեջ: Իսկ անհատական հարաբերություններում նվազագույն բարեմտությունը և ներողամտությունն էլ արգելք են չարիքին: Այս համատեքստում առավել իմաստուն է Պողոս առաքյալի հորդորը. «Մի յաղթուիր չարիցը, այլ բարիովը յաղթիր չարին» (Հռովմ., Գլ. ԺԲ, 21):

Ազգային և ազգամիջյան հարաբերությունների հարթության վրա խնդիրը քննելով՝ Օրմանյանը հաստատում է, որ «Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման» պատվիրանն անշուշտ աստվածադիր օրենք է: Ու եթե Նոր Կտակարանի Օրենսդիրը ցանկացավ սեր արտահայտել նաև չարագործի հանդեպ, ապա պետք է նկատի ունենալ, որ Նա «**ո՛չ ընդհանուր** բարոյն և **ո՛չ ընդհանրական** շահուց ակնարկեց այսու, այլ միայն **անձնական** կատարելութեան աստիճանին (ընդգծումը.- L.U.)»[2]: ***Հարկ է չշփոթել անձնական և հասարակական (ազգային) հարթությունները:*** Անձը կարող է իր բաճկոնը հափշտակողին նաև շապիկն էլ տալ, կամ աջ ծնոտին ապտակողին՝ ձախը ևս դարձնել, բայց «երբ բաճկոնը ձերը չէ, **ազգինն է**, ծնօտը ձերը չէ, **ազգինն է**, եթէ շապիկն ալ տայք կամ ձախ ծնօտն ալ դարձնէք, չարագործութեան գործակից կ'ըլլայք և ոչ բարեգործութեան գործադիր» (ընդգծումը.- L.U.)[3]: Հռչակելով ազգային շահերի, իրավունքների, սեփականության ու հայրենական տարածքի անձեռնմխելիությունը և բացառելով նույնիսկ ազգի անդամի կողմից դրանց օտարման հնարավորությունը՝ Օրմանյանը հորդորում է արդար լինել չարի նկատմամբ, և բարու նկատմամբ՝ սիրալիր, դրանով իսկ կամբողջանա ազգային բարոյականությունը: Միջանձնային հարաբերություններում **«չարին բարեգործությամբ պատասխանելու»** պատվիրանը ազգային և միջազգային իրավահարաբերություններում փոխարկվում է **«չարին արդարությամբ հատուցելու»**

---

[1] Նույն տեղում, էջ 167:
[2] Օրմանյան Մ., Հայ երիտասարդութիւն, էջ 62:
[3] Նույնը:

օրենքի, ինչը բնավ չի հակասում արդարության աստվածային սկզբունքին:

Օրմանյանը մեկնաբանում է Հին Ուխտի օրենքը. **«Վրէժ չ'առնես, եւ քո ժողովրդի որդիներին ոխ չ'պահես, այլ քո ընկերին սիրես քո անձի պէս»** (Ղեւտ., Գլ. ԺԹ, 18): Ըստ օրենսգետի՝ «ընկեր» հասկացությունը կիրառվում է սիրո և համակրանքի իմաստով, բայց փարիսեցիները դրանից բխեցրել են հետևյալ եզրակացությունը. **«եւ ատես քո թշնամուն»**, ինչը բացակայում է օրենքում: Նա պարզաբանում է նշված հասկացության ծավալը՝ նեղ և լայն իմաստով. «ստոյգ ալ իւր մերձաւորէն սկսելով և կամաց կամաց տարածուելով, մինչեւ բոլոր աշխարհի մարդիկներուն վրայ կրնայ իմացուիլ **ընկեր** բացատրութիւնը»[1]: Այդպիսով, լայն իմաստով՝ ***ընկերասիրությունը մարդասիրությունն է:***

Նոր Կտակարանում այս օրենքի քրիստոնեական լրացումը՝ **«թշնամիներին սիրել, անիծողներին օրհնել»**, փաստարկվում է երկու ձևով՝ հակադարձ ապացույցով և Գերագույնի օրինակով («ի մեծէն» փաստարկով): Առաջինով հիմնավորվում է, որ եթե սերն օրենքի համաձայն չգործադրվի, ապա բարեգործությունը փոխշահավետ պայմաններով միայն բարեկամների համար պետք է արվի: Սա, իհարկե, առաքինության ցուցանիշ չէ: Երկրորդ՝ «ի մեծէն» փաստարկով Օրմանյանն ակնարկում է Աստծո վեհության բազում դրսևորումները, Ով իր բարությունն ու շնորհները հավասարապես բաշխել է և՛ բարիներին, և՛ չարերին: Հետևաբար, Աստծուն հետևելով՝ մարդիկ ևս պետք է սիրեն անխտիր բոլորին: Այս պարագայում միայն մարդն իրագործած կլինի **Սիրո պատվիրանն իր բուն էությամբ:**

Աստվածային պատվիրանները քննարկվեցին քրիստոնեական սկզբունքների գործադրելիությունը մեկնաբանելու նպատակով: Բայցև շատ կարևոր են **բարեպաշտական գործերը** (ողորմություն, աղոթք, պահք) և դրանց քրիստոնեական էության մեկնությունը, ինչն ունի սոցիալ-բարոյական և ազգային նշանակություն: Օրինակ՝ «ողորմություն» հասկացության բովանդակությունը ներառում է ոչ միայն դրամատվությունը, այլև բոլոր տեսակի բարեգործությունները, այդ թվում՝ հասարակական, կրոնական, կրթամշակութային և այլն: Կարևոր է նաև **ողորմության չափի օրենքը** (տես՝ Մարկ., Գլ. ԺԲ, 41-44), որը սահմանվում է ***«Յուրաքանչյուրից՝ ըստ կարողության»*** սկզբունքով: Ի դեպ՝ այն եվրոպական սահմանադրությունների հիմնասկզբունքներից է: Ազգային սահմանադրության մեջ ևս սահմանված է. «Ազգայնոց պարտականութիւնն է՝ Ազգին պի-

[1] Օրմանյան Մ., Համապատում, էջ 437:

տոյիցն պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ՝ իւրաքանչիւրն իր կարողութեան չափովն, Ազգին խնդրած ծառայութեանցն յանձնառու ըլլալ...»[1]: Ակնհայտ է, որ սահմանադրական պահանջը վերաբերում է ոչ միայն հարկահավաքությանը, այլև ազգային տարաբնույթ գործունեությանը:

Ընդ որում՝ քրիստոնեական սկզբունքով հարստությունը բացարձակ իմաստով չի խարազանվում: Ինչպես նշում է Օրմանյանը, «վնասակարը հարուստ ըլլալը չէ, այլ սիրտով ինչքերուն կապուած ըլլալը»[2]: Ուստի՝ կարևորը սեփական ունեցվածքից որոշակի մասնաբաժին հանրությանը հատկացնելն է: Այս հրամայականով են առաջնորդվել հայ գործիչները՝ ազգային խնդիրները լուծելու նպատակով ազգի անդամներից պահանջելով դրամական հանգանակություն և բարեգործություն:

Օրմանյանը մեկնաբանում է նաև քրիստոնեական այն պատվիրանները, որոնք վերաբերում են անհատական կյանքի կատարելության պայմաններին և հասարակական կյանքում կիրառվող սկզբունքներին: Ավետարանական օրենքների մի մասը հրահանգներ են՝ ուղղված **անձի՝ ինքն իր հետ հարաբերակցությանը, ներհայեցողությանը, անհատական կյանքին:** Մյուս մասը վերաբերում է **միջանձնային հարաբերություններին,** այսինքն՝ **հասարակական կյանքին:** Անհատին ուղղված խրատներից են հարստության ճիշտ ըմբռնումը, ներքին առաքինությունների անօտարելիությունն ու առաջնայնությունը, ուղղամտությունը՝ որպես յուրաքանչյուր գործունեության ճշմարիտ սկիզբ, Աստծո նախախնամությունը մարդկանց համար և այլն:

Քաղաքացիական և ազգային առաքինությունների՝ Օրմանյանի գնահատումներում արժեվորվում է **ՍԻՐՈ ՕՐԵՆՔԸ**, որը բոլոր պատվիրանների էությունն ու ամփոփումն է. «Ամեն ինչ որ կամենում էք՝ թէ ձեզ անեն մարդիկ, այնպես էլ դուք արէք նորանց. որովհետեւ այս է օրէնքը եւ մարգարէները» (Մատթ., Գլ. է, 12): **Ոսկե կանոնը** հասարակական ու ազգային իրավահարաբերությունները կարգավորող սահմանադրական օրենքների ոգեղեն հենքն է, որից բխում են դրական օրենքները: Նա մերժում է «անխորհուրդ դատաստանները»՝ հիմնվելով քրիստոնեական պատվիրանի վրա. «Մի դատէք, որ չ'դատուիք: Որովհետեւ ինչ դատաստանով որ դատում էք, **նորանով** պիտի դատուիք. եւ ինչ չափով որ չափում էք, **նորանով** կ'չափուի ձեզ» (Մատթ., Գլ. է, 1-2): Այս պատվիրանով նա

---

[1] Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Ի Կ.Պոլիս, Յազգային տպարանի Ս.Փրկչի, 1860, էջ 8: Տես նաև՝ Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պոլիս, 1863, էջ 11:

[2] Օրմանեան Մ., Համապատում, էջ 540:

քննադատում է թե՛ անհատների սխալ արարքները, թե՛ Հայրենիքի ու ազգի նկատմամբ զավթողական քաղաքականությունը:

Հաստատելով, որ աստվածային օրենքները ճշգրիտ մեկնաբանողն ու աստվածային պատվիրանները մարդկությանն ավանդողը Քրիստոսն է՝ Օրմանյանը հորդորում է հետևել միայն Նրա ուսմունքին, ազգային կեցության մեջ գործադրել քրիստոնեական սկզբունքները և խուսափել սուտ մարգարեներից ու կեղծ առաջնորդներից, որովհետև «ժողովուրդը, որ ներքինը կշռել և որոշել չգիտեր, կրնայ սխալիլ և մոլորիլ»[1]: Իսկ չսխալվելու ելակետը նրանց ճանաչելն է՝ իրենց գործերի արդյունքներով:

Նոր Կտակարանի հիմնադրույթներն ուսուցողական են: Դրանց հիման վրա դյուրին է հասկանալ աստվածային և մարդկային օրենքների էությունը, նշանակությունն ու տարբերությունները: Հայ մտածողի դիտարկմամբ՝ աշխարհիկ օրենքները աստվածային սահմանումների հակադրությունն են, եթե չեն բխում վերջիններից. «Արտաքին և մարմնաւորական շահեր որչափ ալ շատ ըլլան, չեն կրնար երբեք մարդը ներքին և հոգեւորական վնասներէն ազատելու փրկանք ըլլալ»[2]: Աստվածային օրենքով երանության կարելի է արժանանալ երկու ուղիով՝ պատվիրանները պահպանելով և բարեգործությամբ: Առաջին ուղին նախապայմանն է, իսկ երկրորդը՝ կատարյալ աստիճանը: Սակայն մարդկային կարողությունը բավարար չէ ինքնակառավարման ու փրկության համար. «Ամէն բանէ վեր աստուածային կարողութիւն կայ, որուն առջեւ անհնար բան չկայ, և որ յամենայնի գործակից և օգնական է մարդկութեան՝ իւր պարգեւներով և շնորհներով»[3]:

Մյուս կողմից՝ Օրմանյանը քննադատում է այն տեսությունները, որոնց համաձայն՝ ամեն ինչ պետք է ակնկալել Աստծուց՝ առանց մարդու ակտիվ գործունեության: Նա ընդունում է Նախասահմանությունը, «սակայն առանց ջնջելու մարդուն գործակցութիւնը, որպէս զի չջնջուի նաեւ ազատ կամքը, առանց որոյ արդարութեան և անօրէնութեան, հոգեւոր փրկութեան և դատապարտութեան կէտերը կը կորսնցնէին իրենց իսկական նշանակութիւնը»[4]: Հետևաբար՝ ***Վերին օգնությունը, աստվածային օրենքների գործադրությունը ներդաշնակվում են այդ օրենքներին համահունչ մարդու ազատ գործունեությանը:***

Օրմանյանի տեսության մեջ մեկնաբանվում է տարբեր իմաստներով ըմբռնված՝ Քրիստոսի հետևյալ խոսքը. «... **շատ առաջիններ**

---

[1] Նույն տեղում, էջ 184:
[2] Օրմանեան Մ., Համապատում, էջ 332:
[3] Նույն տեղում, էջ 540:
[4] Նույն տեղում, էջ 541:

յետինք կ'լինեն, եւ յետիններն առաջինք» (Մարկ., Գլ. Ժ, 31): Քննադատելով բոլոր ազգերի մեջ «առաջինը» լինելու հրեաների հավակնությունը՝ նա բացատրում է, որ Գերագույն Օրենսդիրի նպատակը հրեաներին հասկացնելն է, որ պետք չէ հիմնվել Հին օրենքի վրա՝ ունենալու առաջինը լինելու իրավունք, քանզի հրեաները երկնային Արքայության մեջ «յետին պիտի մնան», իսկ «հեթանոսներ որք Հին Օրէնքի տեսակէտով յետիններ էին ընդունուած, Նոր Օրէնքի մէջ առաջին պիտի հանդիսանան»[1]: Միաժամանակ հաստատում է, որ Փրկագործության առաքելությունը **ողջ մարդկությանն է** վերաբերում և «ոչ հրէական աշխարհին քաղաքական փրկութեանը, ինչպէս Հրէայք սիրեցին կարծել և սպասել»[2]:

Այս սկզբունքի՝ որպես աստվածային օրենքի գործադրության զորությանը Օրմանյանն անդրադառնում է իր ժամանակի քաղաքական իրողությունները քննելիս: Նա մերժում է տիրապետող ժողովուրդների՝ իբր **առաջնային ազգ** հորջորջվելու և մյուսներին հպատակեցնելու ձգտումները և հաստատում. ***չկա աստվածային այնպիսի օրենք, որից բխի որևէ իրավազորություն մարդկության մի մասի համար:*** Քրիստոսն ինքը բացահայտեց կեղծ օրենսդիրներին, ովքեր «սուտ օրինադրութեան և կեղծեալ արդարութեան և պատրուակեալ սրբութեան կերպարանով ճշմարտութիւնը հալածել կը կարծէին»[3]: Ի վերջո՝ նրանց տիրապետության հետևանքը ոչ թե հասարակական բարօրությունն էր, այլ ժողովուրդներին իրավազրկելով՝ իրենց մենիշխանության ամրապնդումը: Իսկ աստվածային արդարադատությունը միշտ պաշտպանում է արդարներին:

Քրիստոսի ուսմունքն ուղղակի հաղորդվեց Նրա աշակերտներին՝ որպես գործունեության ընդհանուր ծրագիր, և անուղղակիորեն ժողովրդին՝ իբրև ընդհանուր բարոյախոսություն: Այս առումով Օրմանյանը գրում է. «իբր ընդհանուր սկզբունք կրնանք յիշել, թէ Յիսուսի յարութենէն ետքը ըսածները և ըրածները պաշտօնական լրացումներն ու գործադրութիւններն են, բոլոր մահուանէ առաջ ըսածներուն և գրածներուն»[4]: Այսինքն՝ ***քրիստոնեական օրենսդրությունը և օրենքների գործադրությունը ավարտուն չեն, այլ շարունակական են այնքան, որքան ժամանակ կլինեն Քրիստոսի ուսմունքի ճշմարիտ հետևորդներ:*** Որպես տիպական օրինակ՝ կարող ենք հաստատել, որ եկեղեցական օրենսդրությունը, կանոնական իրավունքը կայացել են առաքելական սահմանադրության հիման վրա և գործադրվում են առանձին ժողովուրդների ազգային

---

[1] Նույն տեղում, էջ 544:
[2] Նույն տեղում, էջ 1036:
[3] Նույն տեղում, էջ 631:
[4] Նույն տեղում, էջ 980:

կեցության առանձնահատկություններին համապատասխան: Հետևաբար՝ ***Ավետարանը ողջ մարդկության գլխավոր օրինագիրքն է՝ Գերագույն սահմանադրությունը:***

Աստվածաշնչյան օրենսդրության մեջ Օրմանյանը հատկապես մանրամասն մեկնաբանում է **ամուսնության և ապահարզանի խնդիրը:** Դրա կարևորությունը պայմանավորված է ազգային կյանքում ընտանեկան իրավահարաբերությունների կարգավորման անհրաժեշտությամբ: Ի դեպ՝ ընտանեկան իրավունքը միշտ առանձնահատուկ տեղ է ունեցել հայոց բոլոր Դատաստանագրքերում, կանոնադրություններում և սահմանադրություններում:

Ս. Գիրքը հաստատում է տղամարդու և կնոջ ամուսնական միությունը՝ որպես բնական օրենք (տես՝ Ծննդ., Գլ. Բ, 23-25, Մատթ., Գլ. ԺԹ, 4-5): Ըստ Օրմանյանի՝ օրենքի վերջին մասը՝ «մարդը կ'թողնէ իր հայրը եւ իր մայրը, եւ կ'յարի իր կնոջը. եւ մէկ մարմին կ'լինին» (Ծննդ., Գլ. Բ, 24), թվում է ունի այնպիսի իմաստ, որ կնոջ կամքով այրը պիտի հպատակվի նրան, ինչը «թէ՛ բնական կարգով անհաճ, թէ ընտանեկան դրութեամբ անյարմար, եւ թէ բարոյական իմաստով անպատեհ է»[1], ուստի՝ այն ընդունելի չէ: Մինչդեռ հարկ է այս հատվածի էությունը, ճշմարիտ իմաստը մեկնաբանել «Տասնաբանեայ» Օրենքում սահմանված այն պատվիրանների համադրությամբ, որոնք վերաբերում են ծնողների ու զավակների պարտականություններին (տես՝ Ելից, Գլ. Ի, 42): Վերջիններն Աստծո իրավունքներից հետո առաջնային են և հռչակված՝ որպես բացարձակ, անհրաժեշտ և գերագույն պատվիրաններ:

Աստվածաշնչում ամուսնական օրենքն առավել ցորավոր է համարվում: Ամուսնանալուց հետո զավակների ընտանեկան պարտականությունները նախադասվում են որդիական պարտավորություններին: Նրանք պարտադրված են հոգալ նախ կնոջ, հետո ծնողների մասին: Այս պարտականությունը բխում է ամուսնական միության աստվածային հաստատումից:

Օրմանյանը չի ընդունում **«մեկ մարմին»** հասկացության բառացի ընկալումը՝ նշելով. «հռչակուած մարմնաւոր միութիւնը բարոյական իմաստ ունի, և ոչ թէ նիւթական իմաստ»[2]: Բարոյական իմաստով ամուսնությունը կնոջ և տղամարդու **կամավոր** միությունն է, որը, սակայն, նրանք չեն կարող խզել իրենց կամքով, ինչպես որ հնարավոր չէ մեկ մարմինը բաժանել երկուսի, թեպետ միավորվել է երկու անձ: Նրա մեկնությամբ՝ այդ միության **օրինականության** փաստը նշված անձանց անխզելի միավորումն է, **բարոյական** իմաստը՝ հոգու, մտքի և սրտի միասնականությունը, որովհետև

---

[1] Նույն տեղում, էջ 503:
[2] Նույն տեղում, էջ 504:

ընտանեկան իրավունքը և օրենքը պահանջում են, որ ամուսինները կամքով, ցանկությամբ ու խորհրդով միավորվեն՝ պահպանելու ընտանեկան կյանքի կայունությունն ու վայելքը: Հետևաբար՝ «այն որ Աստուած միաւորեց, թող մարդը չ'բաժանէ» (Մատթ., Գլ. ԺԹ, 6-7):

Բնականաբար՝ ամուսնության օրենքը առնչվում է նաև **ապահարզանի** խնդրին: Մովսիսական օրենքով թույլատրվում է ապահարզանը, բայց դրա իրավունքը վերապահված է այրերի համար՝ առանց սահմանելու, թե երբ և ինչ պարագայում կարող է այդ իրավունքը գործադրվել (տես՝ Բ. Օրինաց, Գլ. ԻԴ, 1-3): Ընդ որում՝ ցանկացած դժգոհություն կարող էր ապահարզանի հիմք ծառայել: Քրիստոսը մարդուց օտարում է այդ կամայական իշխանությունը՝ բացատրելով Օրենքի զորությունն ու իմաստը: Նա միտված է ոչ թե ապահարզանի իրավունքը սահմանափակելու, այլ բոլորովին վերացնելու, քանզի այն բնական ու հիմնական օրենք չէ և չի եղել: Բանն այն է, որ Քրիստոսը հիմնվում է Դրախտում հաստատված նախնական աստվածային օրենքի վրա, որի համաձայն՝ **ամուսնական միությունը մշտնջենական է,** չկա ապահարզանի իրավունք, որովհետև Աստված է օրենսդրական իրավունքով միավորողը, ոչ թե մարդը:

Սակայն այն, ինչ արգելված է մարդու համար, Աստծո իրավասությամբ հնարավոր է: Օրմանյանը բացատրում է, որ Աստծո հաստատած օրենքի գործադիրը՝ եկեղեցին, Նրա անունից է զուգավորում, աստվածային օրենքի զորությամբ է ամուսնությունը հաստատում, վավերացնում և օրհնում: Դրան հակադրվողը մարդն է, այսինքն՝ «օրէնքէ դուրս եղող մարդուն ազատ կամքը, որ չկրնար օրէնքով եղած բան մը իւր կամքով ջնջել, ոչ ալ օրէնքով եղած բան մը իւր կամքովը քակել»[1]: Հետևաբար՝ ***օրենքով միավորվածը բացառապես օրենքով էլ պետք է լուծարվի և ոչ անձնական կամքով:*** Եվ Քրիստոսը վերացրեց մարդկային (դրական) իրավունքով ու նախաձեռնությամբ իրագործվող ապահարզանը:

Այս համատեքստում Օրմանյանը մեկնաբանում է Օրինաց Գրքում նշված **«արձակել»** և եկեղեցական իրավունքով հաստատված **«լուծարել»** հասկացությունների իմաստները: Առաջինն անհատական գործողություն է, երկրորդը՝ օրինական: Ընդ որում՝ անհատի գործողությունը չի վավերացնում օրինական մարմինը: Հարկ է նշել, որ Արևելյան բոլոր եկեղեցիներն ընդունել են, որ «Եկեղեցին իշխանութիւն ունի ամուսնական կապը լուծանել, իբր աստուածային օրէնքին գործադիր»[2]: Հայ եկեղեցին ևս գործադրում է ամուսնությունը լուծարելու իշխանությունը: Իսկ լատինական եկեղեցին չի

---

[1] Նույն տեղում, էջ 506:
[2] Նույնը:

ընդունում լուծարման իրավունքը՝ ամուսնությունը համարելով անքակտելի միություն:

Ինչ վերաբերում է «կինը արձակելու» օրինադրությանը և քրիստոնեական օրենքով դրա բացառմանը, Օրմանյանը հաստատում է, որ այրերին տրված մովսիսական կանոնը օրինական իրավունք չէր հաստատում, քանզի մարդկության ընտանեկան կյանքի նախասկզբնական շրջանում մարդուն նման իրավունք չի շնորհվել: Բայց Իսրայելի ժողովրդի խստակեցությունը հաշվի առնելով՝ թույլատրվել է «կնոջը արձակել», միայն թե ***այս թույլտվությունը ժամանակավոր և ոչ հաստատուն օրենք էր:*** Նոր Օրենքում այդ կարգադրությունը չփոխանցվեց, ու դրա գործադրությունը դադարեց Հին օրենքի հետ: Օրենսգետի մեկնությամբ՝ մասնավոր պատճառներով օրենքը չի փոփոխվում, բայց «երբ բնական կամ բարոյական արգելք մը կ'ընդհանրանայ, օրէնսդիրը իրաւամբ թոյլտուութիւններ և բացառութիւններ կը հրամայէ, որպէս զի իրաց օրինական վիճակը պահուի»[1]:

Օրենքի բացառությունն այս դեպքում արդարացված է, որովհետև ապահարզանի իրավունքը Իսրայելի ժողովրդի ընտանեկան կյանքի անդորրն ապահովելու համար էր: Հակառակ պարագայում՝ ընտանեկան գժտությունները կվերածվեին հասարակական երկպառակությունների: ***Նոր օրենքում նշված բացառության չժառանգորդվելը պայմանավորված էր քրիստոնեական գաղափարախոսությամբ,*** քանզի, ինչպես նշում է Օրմանյանը, «Յիսուսի դրութեամբ, սիրոյ և գթութեան, հեզութեան և երկայնամտութեան նոր օրէնք մը կը քարոզուէր, և անոր հիմը պէտք էր սկսէր նոյն իսկ ընտանեկան յարկէն»[2]:

Այդպիսով՝ ***օրենսդրական բարեփոխումները սկսվեցին ընտանեկան հարաբերությունների օրինական կարգավորումից:*** Մարդասիրական սկզբունքով պետք է հաղթահարվեին գժտությունները, քանի որ անհատական ազատ կամքով ապահարզանի իրավունքը հակասում է ընտանիքի գաղափարին: Հայ մտածողի հետևությամբ՝ «սիրոյ և միութեան օրէնքը, եթէ ընտանիքի մէջ ամուր չմնար, բոլոր հանրային դրութեան մէջ ալ պիտի չտարածուէր»[3]:

Անդրադառնալով Պողոս առաքյալի Թղթերին՝ Օրմանյանը հաստատում է, որ առաքյալը ևս ժխտում է ամուսնական միությունը խախտելու մարդու անհատական իրավունքը, բայց ոչ օրենքով ու եկեղեցական իշխանությամբ ամուսնությունը լուծարելու իրավասությունը (Տես՝ Հռովմ., Գլ. է, 2-3, Ա. Կորնթ., Գլ. է, 10-17):

---

[1] Նույն տեղում, էջ 508:
[2] Նույն տեղում, էջ 508-509:
[3] Նույն տեղում, էջ 509:

Նոր օրենքում սահմանված պատվիրանով անհատը չունի ապահարզանի իրավունք, բայց «բնաւ արգելք մը դրուած չէ, որ օրինական իշխանութեամբ լուծուի ամուսնական կապը»[1]:

Հարկ է նշել, որ Ս.Գիրքը ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորման կանոնական մանրամասնություններ չի հաղորդում, այլ սահմանում է հիմնարար սկզբունքներ, որոնց հիման վրա հոգևոր իշխանությունը՝ որպես աստվածային օրենքների գործադիր, մշակում և Ազգային-եկեղեցական ժողովով վավերացնում է ընտանեկան իրավասությունների համակարգը և ապահարզանի օրինական կարգը:

Քրիստոնեական արժեհամակարգի իմաստավորումն ու հիմնարար սկզբունքների մեկնաբանությունները հիմք դարձան Օրմանյանի մարդաբանական, սոցիալ-բարոյական, պատմափիլիսոփայական մտակառուցումների և իրավաքաղաքական հայեցակարգի համար:

[1] Նույն տեղում, էջ 511: